



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԲԱՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 103

12 ՅՈՒԼԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՄԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի ① 12 Յուլիս 1913 ① Թիւ 103

«Մրբազան Քաճաճապարտեմ Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Կաթողիկէ Կաթող. Մէրի Տէլ Վալի, սուր. Ս. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՐԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅՔԷ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՍՆԱՆՈՍ

(Շար.)

10. Մերազնէից մէջ գրեթէ ամէն լուրջ
պատմաբաններ իբր ստույգ կամ գոնէ իբր
շատ հաւանական դէպք մը կ'ընդունին այս
ճամբորդութիւնը ի Հոմ, : Ասոնց գլուխն է
մեծն Դաթրճեան . իսկ Տաշեան ստանց բա-
ցարձակապէս հաստատելու, գրեթէ միեւնոյն
եղրակացութեան կը յանդի : Սակայն եղան
հաւ ոմանք որ փորձեցին այս ճամբորդու-
թիւնը կամ անստույգ կամ անհաւանական
եւ կամ մինչեւ իսկ մտացածին յերկրուած
մը նկատել, սոսկ հետեւողութեամբ Սիլիզիոյ
Բողանդեանին, — որուն դիմաքառեցաւ իր
ժամանակին հոշակաւոր պատմաբանն Չամ-

շեան, — այլ մանաւանդ հետեւողութեամբ եւ
ի սէր Կոթշիոյի գերմանականացալով: Ա-
սոնց հեղինակութիւնը սակայն իրենց փառ-
աբունն չափ է: Հ. Բ. Սարգսեան կ'ըսէ թէ
Տրդատ ո'չ թէ Հոմ գնաց, այլ ի Կ. Պոլիս
դաշնադրութիւն կնքելու համար. եւ թէ Ս.
Դրիգոր բնաւ չընկերացաւ իրեն: Առ այս՝
կ'ըսէ Հ. Տաշեան. եթէ Տրդատայ արեւմուտ
երթալը կ'ընդունուի, մեծ դժուարութիւն մը
չկայ ընդունելու նաեւ որ Ս. Դրիգոր ալ ըն-
կերացած ըլլայ, ըստ Ագաթանգեղոյ: Այս
խնդիրն աւելի քննութեան կարօտ է*: Ասոր
պէտք է աւելցնել մանաւանդ Եղիշէի պէս
ճոխութիւն ունեցող հեղինակի մը խօսքերը,
զորս վերեւ յիշեցինք. Չհաւատն որ ի Քրիս-
տոս, ընկալեալ ի Ս. Եպիսկոպոսապետէն Հը-
ռոմայ, որով կը հաստատուի նաեւ այն պա-

* Հանդ. Ամս. 1891, էջ 247.

րազանք քե Ս. Գրիգոր ալ Տրդասայ հետ եր* :

11. Իսկ Հ. Յ. Աստուրեան աւելի յառաջ կ'երթայ ** և այս ճամբորդութիւնը գրչի մէկ հարուածով կը չքացնէ : Աւանդութիւնը, կ'ըսէ, Տրդասայ եւ Լուսաւորչին նոյն իսկ Հոռոմ ճամբորդել կուտայ որ բնականապէս սոսկ զրոյց մը պէտք է նկատուի, երբ անոր մեջ Տրդաս Ա.ի Հոռովմ ճամբորդութեան արձագանգը չենք ուզեր տեսնել : Կութշմիարի խօսքերն են գրեթէ *** : Մեզ կ'երեւի թէ այս բացարձակ ժխտումը փոքր ինչ յանդերձութիւն է . տեղի կար Կո'նէ տատանելու : Բանդի այս խնդրոյս մէջ՝ հայ պատմագրի մը գիմացը՝ ոչ թէ աւանդութիւնը միայն, — որ ըստ ինքեան ահապին փաստ մըն է, — այլ վաւերական հին հայ պատմաբաններու բանակ մը կը կանգնի . և բոլոր թեր ու գէժ փաստերը քաջ կշռելէն վերջը, բնաւ կարելի չէր հաստատել թէ այս ուղեւորութիւնը վէպ մը, սոսկ զրոյց մը եղած ըլլայ, և այն՝ բնականապէս : Իսկ հեղինակին յառաջ բերած պատճառաբանութիւնը՝ իր սոյն բացարձակ մերժումը սպաւցուցանել կարենալէն շատ և շատ հեռու է :

Պէտք է դիտել որ 312 Նոյեմբերէն՝ — նոյն իսկ աւելի առաջ, — սկսելով, մինչև 314ի վերջերը, Կոստանդիանոս և Լիկիւնիոս կայսերք իրարու բարեկամ էին, ուստի Տրդատ այդ միջոցին Հոռոմ երթալու և Կոստանդիանոսի հետ բարեկամութիւն հաստատելու համար բնաւ երկիւղ մը չէր կրնար ունենալ Լիկիւնիոսէ . երկուքին հետ ալ եղած կը սեպուէր թէ՛ բարեկամութիւնը և թէ՛ գաշինքը : Մանաւանդ որ Տրդատ շատոնց կը ճանչնար զԼիկիւնիոս և շատ մտերիմ էր անոր դռնէ — եթէ նոյն իսկ նա չէ նոյն անձն ընդ Լիկիանէս Կոմսին որ զինքը անոյց**** — Ներսէս արեաց արքային գէժ կատարուած ճակատամարտէն ի վեր, յորում Լիկիանոս և Տրդատ միասին գործեր էին Դադերիոս Ա.

գոտտոսի հետ : Լիկիանոս շատ վերջը թշնամացաւ Տրդատայ հետ, այսինքն երբ թշնամացաւ Կոստանդիանոսի հետ և սկսաւ քրիտոնեաները հալածել : Խորհնացին կ'ըսէ . *

Լիկիանոս որ քս առակին քե՛րն՝ ընձուանկարելի է զիայնուցսն փոխել, եւ Նքովպացւոյ զթխութիւն, նոյնպէս մարդոյ ամպարոցի զբարսն, առ ի հաւաստն գանի դրժող, եւ երկրորդ առ բարեգործն իւր (Կոստանդիանոս) ապստմբ. ցանկասեռս այս եւ զարեելի ալելուր՝ ներկուածոյ ունելով զհետս : Եւ իբրեւ յայնցեալ դաւն եւ գիտաց քե նմա լուռ ոչ լինի Կոստանդիանոս, ժողովեաց զորս ընդդիմանալ պատեալմաւ : Եւ ցրտացեալ ի սիրոյն Տրդասայ, մեր քաղաւորի, ակնածեալ որպէս արդարեւ ի բեմամոյ, վասն զի գիտէր քե ասելի է արդարոյ ստեմայն ամբարիտս :

Իսկ Տրդատ իր այս ի Հոռոմ ճամբորդութեանը համար Մաքսիմիանոս Դայա խուժողով կայարէն բնաւ վախնալու կամ ակնածելու բան չունէր . նախ որովհետեւ Տրդատ յաղթած էր անոր և կորակոր ամօթապարտ ետ մղած, ինչպէս կը հաւատէ Նեսեքիոս . երկրորդ՝ որովհետեւ Տրդատ իր պետութեան հիւսիսային մասերն ալ արդէն ապահոված և 297էն — Ներսէսի պարտուելէն — առդին տիրող ընդհանուր և նշանաւոր խաղաղութեան վրայ (որ 40 տարի տեւեց) կատարելապէս վստահ, նա մանաւանդ իր մի քանի ամսուան բացակայութեանը համար իր բոլոր սահմաններն ալ ստուար բանակներով ամրացուցած ըլլալով, շատ հանգարտ սրտով կըրնար երթալ ի Հոռոմ : Բաց աստի այս միջոցներուն անագորոյնն Դայա արդէն իսկ ջախջախուած մէկն էր : Ինքը՝ իբր արիւնընուշտ Մաքսենտիոսի բարեկամ ու գաշնակից, թըշնամի ըլլալով Կոստանդիանոսի և Լիկիանոսի, Հոռոմայ զբաւուռէն վերջը անմիջապէս քալեց անոնց վրայ . սպառնալու պարտուեցաւ Լիկիւնիոսէն՝ Աղբիւնուպոլսոյ քով և փախաւ ի Նիկոմիդիա, և անտի ի Տարսոն, ուր դեռ մահու խնդրով, երեք ամիս չարչարուեցաւ ու մեռաւ 313ին : Ուստի բնաւ ճշմարիտ չէ

* Տաշեան, Ագաթ. էջ 146 :

** Քղ. Վեր. 266—269 :

*** Տես Տաշեան, էջ 145 :

**** Հմմտ. Տաշեան, 128 : Սակայն պատճառաբանութիւնը շատ հանգիչ չերեւար :

* Բ. 2Ը :

Հ. Աստուրեանին ըսելը՝ թէ «Տրդատ աս ան-
 փաղափարեմ գործած պիտի ըլլար, եթե
 անեստ բնելով արեւելեան երկու կայսրները
 (Մաքսիմիանոս և Լիկիանոս)՝ իրեն դաշնա-
 կից բնօրէն հեռուն Արեւմուտի մէջ նստող
 Կոստանդիանոսը, միւս երկու կայսրներու նա-
 խանձորը, եւ միեւնոյն ժամանակ տակա-
 ւին ոչ բոլորովին փոխանցեայն: Տրդատ ա-
 պահովապէս այս բանս քրտն չէ եւ դժուա-
 րաւ ալ կրնար ընել. վասն զի երեք կայսր-
 ները սոսկալի նախանձ ունեին իրարու դէմ»:
 — Որ յոյժ ցուցանէ ոչինչ ցուցանէ, կ'ըսէ
 արամարտական առածը: Դայա, ինչպէս ը-
 սինք, ոչինչի հաւասար էր, և իրօք ալ այն
 միջոցներուն ոչնչացաւ, ինչպէս ըսինք. իսկ
 Լիկիանոս, միշտ այն միջոցներուն (312—
 315), գրեթէ նոյն անձն էր Կոստանդիանոսի
 հետ. կը կրկնենք, Կոստանդիանոսի հետ դա-
 շինք կուէ՛ր համադր էր Լիկիանոսի հետ դաշ-
 նադրութեան: Կոստանդիանոս բնաւ նախան-
 ձոս չէր միւս կայսրներուն, այս արժանա-
 պատիւ, վեհանձն ու քրիստոսասէր կայսրը
 բնաւ սոսկալի հախանձ չունէր անոնց դէմ:
 Մ. Դայա արդէն չէր արժեք նախանձի ա-
 ռարկայ ըլլալու, զգուելի ոչնչութիւն մըն
 էր արդէն. իսկ զԼիկիանոս ինքը Կոստան-
 դիանոս բարձրացուցած, սիրած, փայփայած
 էր, մանաւանդ իբրեւ իր քեռայրը: Եւ եթէ
 պայքարեցաւ անոր դէմ, ապերախտութիւնը
 պատժելու, քրիստոնէից հալածանքը զաղ-
 րեցնելու և իր արդար իրաւունքը պաշտ-
 պանելու համար էր միայն: Եւ իրեն հա-
 մար՝ Տակաւին ոչ բոլորովին փոխանցեայ ը-
 սելը՝ շատ թեթեւօրէն նետուած ոճ մըն է,
 եթէ չմկրտուած ըլլալուն կ'ուզէ ակնար-
 կուիլ. ապա թէ ոչ 312 Հոկտեմբերէն աս-
 զին Կոստանդիանոս, զոր իբր սուրբ կը
 պատուէ ո'չ միայն Հայաստանեայց ուղղա-
 փառ, այլ և Արեւելեան Եկեղեցին և կը յար-
 գէ Արեւմտեանն ալ, Կոստանդիանոս, կ'ը-
 սենք, եղած է մի՞ծ այն քրիստոնեայ կայսրը
 ինչ որ եղած է ի Նիկիա... Այն որ ի հա-
 սակի արուբեան, ի փառաւորութեան տե-
 րութեան իւրոյ եւ պարծանացն եւ յաղթու-
 րեան զլեւանս, զհերութիւն, զպարծանսն եւ

զպտուղս յաղթութեանն՝ արկ ընդ վսանգաւ,
 եւ առաջի ծերակուսին, ժողովրդեանն եւ
 իմաստնոց զԱյն դաւանեցաւ որ ասացն՝ թէ
 «Որ խոստովանեցի զիս առաջի մարդկան,
 խոստովանեցայ եւ ես զմտանէ առաջի Հօր
 իմոյ»: *

(Շարունակելի)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անփոխարինելի տնականալ մը պիտի մատուցա-
 նենք մեր պատուական ընթերցողներուն, մանաւանդ
 Եր. Տեառն Կոմիտասայ յարգազէր սիրողներուն, —
 այս է՝ ընդհանուր Կաթողիկէներուն, — ինչպէս նաեւ
 առ հասարակ գիտականներուն, մեր թերթին մէջ
 հետզհետէ հրատարակելով Տ. Կոմիտաս նահա-
 տակին պատմական կրկին հեղինակութիւնները նոյ-
 նութեամբ, միայն շատ կարեւոր ծանօթութիւննե-
 րով ճոխացնելով: Մինչեւ հիմա բնաւ լոյս չեն տեսած
 այս թանկագին երկասիրութիւնները, և քաջաւիկ են
 թուով անոնք որ ծանօթութիւն իսկ ունեցած ըլլան
 անոնց վրայ:

Իսկ մեզի համար անսպասելի պատեհութիւն մը
 պիտի բերած էր որ՝ ժամանակին, մեծ զարմոյշա-
 մով ծանօթեցանք էինք մենք այս երկու տնայա-
 կան գրութիւններուն, ըստ պատահման տեսած ըլլա-
 լով անոնց օրինակները վաղեմի գերդաստանի մը քով.
 անթարթ աչօք կարդացած, անյադօրէն ճաշակած
 էինք զանոնք: Աղաչեցինք ապա այդ տղնուատհմ
 գերդաստանին ներկայացուցիչներուն, ստիպեցինք,
 բռնադատեցինք, և տեղի տուին մեր թախանձանոց
 առջեւ և ընդօրինակել տուինք այդ անգիւստ յիշա-
 տակարանները: Կարծենք թէ ասոնց բնագիրները կը
 պահուին ի Վենետիկ՝ Ս. Ղազարու վանքին մէջ, Տ.
 Կոմիտասայ իսկ ձեռագրով օրինակուած:

Եւ որովհետեւ այսպիսի գտնի մը ընդհանրու-
 թեան կը պատկանի, որոշեցինք զայն հրատարակու-
 թեան տալ, մանաւանդ Տ. Կոմիտասայ վարուց — որ
 արդէն աւարտեցաւ — մարգարայեւ և անմահ յա-
 ւելուած մը ըլլալու բնական պատեհութեամբ:

Սակայն պէտք կը զգտնէք քանի մը խորհրդածու-
 թիւններ նախադասել հրատարակութեան, այս երկու
 գործոց վրայ ամփոփ գաղափար մը տալու մասով:

Տէր Կոմիտասի այս կրկին երկասիրութիւնները
 պատմական են, ինչպէս ըսինք, եւ ժամանակին երկու
 գլխաւոր գէպքերը կը բովանդակեն:

* Գաթըր՝ Տիեզ. Պատ. Բ. էջ 293:

Անաթիւր կը պատմէ Սուլթան Մուսթաֆա Բ. ի դաճնիկէցութիւնը (1703) և Ա. Տաթուր Գ. ի գաճակութիւնը։ Այս գէպը ինքին Օսմ. պատմութեան ամենէն հետաքրքրական, յուզիչ ու ողբերգական գրուածքներէն մէկն է։ Այս գրութիւնը սակայն համեմատաբար երկրորդէն աւելի համառօտ է։

Երկրորդ կը պատմէ Աւետիք Պատրիարքին առաջին անգամ իշխանութեան գլուխ անցնելը, իր բազմակնճիւռ և ամենախարդախ ու թաքթաքուն չնարքները, իր անզուսպ ամբարտաւանութիւնը, դաւաճելն ու տապալումը։ Տեսարանին մէջ մեծ դեր մը կը կատարէ նաև Յովհաննէս Չմիւռնիացին, յետոյ պատրիարք. իբրեւ ի հայելւոյ կը ցոցադրուին տնոր ահաւոր նկարագիրն ու վատթարութիւնները։ Ո՛ր դիւտէ, չնար է կարգաց նա իր ողբալի յիշատակին ո՛յսքան մաքուր և կորովի գրչէ մը դատապարտութիւնը, և փրփրաց սխալակութեամբ. և ի քէն վրիժառ, երբ քանի մը տարի վերջը պատրիարք եղաւ, սպերասան, քարարիկ անզգամութեամբ ի մահ դատապարտեց անմեղ գաւառակը... զՏ. Կոմիտաս։

Թէեւ գրութեանց կարգը կը պահանջէ որ սկըսինք առաջինը նախ հրատարակել, բայց որովհետեւ իրարմէ անկախ են, մենք կը սկսինք երկրորդին հրատարակութեամբ, աւելի մօտէն մեզի հետ առնչութիւն և օգտակարութիւն ունենալուն համար. իսկ անկէ անմիջապէս վերջը պիտի հրատարակենք առաջինը։

Արդ այս երկրորդին մէջ ընդհանուր նիւթ առնուած է Աւետիք պատրիարքին հոգեկան վիճակին վերլուծութիւնը, Կաթողիկէից նկատմամբ, իր չար, տգէտ և կանխակալ կարծիքը և հանած հայածանքը։ Եւ որովհետեւ այս խուժգուժ հայածանքին համար և Կաթողիկէութիւնը հակա-Լուսաւորչեան ցոյց տալուն համար զինքը մեծ նախանձախնդիր և Ս. Գրիգոր Լուսաւորչի լոյս հաւատքին իբր նորոգող կը քարոզէին տգէտներն ու չարերը, ուստի Տ. Կոմիտաս միտքերը լուսաւորելու և խորհուածանքը մերկապարանոց նշաւակելու և ձողկելու համար գրեց այս պատմութիւնը. իսկական մարդը, տնոր կիրքերը, անոր սեւ հոգին բարձրաքանդակ գրոշմելով։ Առաքելութիւն մըն է ուրեմն որ կատարեց Տ. Կոմիտաս։

Գրութեանց լեզուն հայերէն գրաբարն է։ Ժամանակին տղեցութիւնը յայտնի է։ Այսու հանգերձ համեմատաբար խօսելով, կոկիկ լեզու մըն է, քաղցր և զիւրաւահ, ճարպիկ դարձուածներով, և նոյն իսկ իր ժամանակին բրտութիւններովն ու խառնուրդներովն իսկ հաճելի, և տեղ տեղ շատ գեղեցիկ շարադրութեամբ։ Երանելոյն ոճը ինքնայատուկ է և իր բոլոր գրուածքց մէջ գրեթէ անայլալի։

Պատմական ոճը անվերապահ կրնանք գովաբանել, ինքը ժամանակակից և տկանատես վկայ է. իր վճիռները ճշմարտութեան հուժկու կնիքը կը կրեն։ Ձեռնը հայելիի մը պէս օտուզապատուժ է։ Ոճը սահուն է, կորովի, իրական նկարագրութիւններով, բը-

նական գնացք մը ունի, վառվռուն պատկերաւոր և արագընթաց, գլխէ գլուխ հետաքրքրական, որով և կատարելապէս գրաւիչ։

Ի յայտ կու գան Երանելոյն ընդարձակ հմտութիւնը, խոթաթափանց միտքն ու սուր և անսայթաք դատողութիւնը, բազմակողմանի տեսութիւնները, ուղղամտութիւնը, անհամեմատ համեստութիւնը, Բայց ամէն բանէ աւելի ի հանդէս կու գայ Քրիստոսի արիասիրտ Նահատակին անյողքողղ ուղղափառ հաւատքն ու յոյսը, հաստատակամ համոզումը Կաթողիկէութեան մէջ, իբր խմոր՝ որդի Հռովմայ Ս. Եկեղեցւոյն, որուն վարդապետութիւնը քորողեց տալիներով անխնջ, որուն դաւանութեամբ ի սէր ճըլմարտութեան զոհեց իր կեանքը յօժարակամ, թափեց իր սրբասուն Արիւնը։

ՄԱՆՕԹ. ԽՄԳԻՐ.

Վ. Ս. Ս Ն.

յեթին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան որ ընդ միմեանս վասն Գարդիկոսիւնեան, եւ յաղագս որոյ յայցնելոյն ունեմն երկրորդ լուսաւորիչ կոչեցելոյն յովանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն հաւախոմից նորին։

Շարժեալ ի ստիպմանէ թախանձանացս՝ կամեցայ զայս եւս շարադրել աստանօր, ուրովհետեւ յաւուրս յայտոսիկ գործեցաւ, մանաւանդ լծեցի զանձն իմ ի կառս սիրոյ¹, վասն զի հրաւիրեցայ յեղբարց ուսումնասիրաց առ ի լինթանալ յասպարէզս պատմութեան եղելոյ ի ժամանակս մեր։ Սակայն ոչ է իմ կար. քանզի ոչ ունիմ զճարտասանութիւնս բանից, ո՛չ զստորագրութիւնս գրոց, և ո՛չ զմակացութիւնս իմաստից, զի ավտիցեմ ի դաշտս քարտենից, ի ձեռն մելանացս. ալ զուն ինչ² ընթերցասիրութիւնս երեւելով ի յիս, վասն որոյ կարծեմ յովանց հմուտ գոլ բազմաց գիտութեանց. բայց ես ոչ երբէք պարծեցայ և ոչ եւս պարծիմ, զի ոչինչ եմ մանաւանդ տրուպ եւ ստորուկ յամենից բանասիրաց։ Այլ ըստ հրաւիրման յանձանց արժանաւորաց եւ վեհագունից՝ հաղանդեալ յանձն առի ըստ հրամանաց նոյնին՝ զնախկինն³ և գերկրորդս պատմութիւն եւ ձեռն

¹ Այս տեսակ փոխաբերութիւնները ժամանակին գրական ոճոյ արդիւնք են։

² Քիչ մը։

³ Ինչպէս անարկեցիք, առաջին գրութիւնը Սուլթան Մուսթաֆա Բ. ի գէմ՝ Ենիէլէնիկոս տ. պատմութեան վրայ է։

արկի ըստ կարի իմում, որ եւ առաւել է քան
զկարն իմ: Սակայն ապաւինելով ի մարդա-
սիրութիւնն ամենամեծ շնորհացն Հոգւոյն
Սրբոյ, որ միշտ զեղու զձիրս շնորհացն իւ-
րոց առ մաղթողս իւր. որպէս զի ակն ար-
կեալ եւ իմ վերին յառատագունեղ պար-
ցեալն, զի գոնէ զաղօտ ինչ պարգեւեա-
ցէ յիւրում համատարած շնորհացն, զի նո-
րին կարողագունեղ օգնականութեամբն՝ թե-
րեւ կարացից աննախանձաբար եւ ճշ-
մարտապէս ի վճարումն հատուցանել զյառա-
ջարկեալ լանս՝ որոյ սկիզբն եղեւ ի թուա-
կանի ներմարմնաւորութեան Բանին Աստու-
ծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ՝ հազար
եւ եօթն հարիւր եւ մէկ ամիսն. եւ ի մերոյս
թուականի հազար հարիւր եւ յիսներորդի-
զի զկուս նախաչարն ստատանայ բանասրկել
եւ յառաջ ածել, յառթել եւ յօգաւորել զբանս
խոտովութեան ի մէջ ազգիս մերոյ հայկակա-
նի: Եւ որպէս յակցանն աշխարհիս ինքն
ընդ յինքեան ոչ կարացեալ յառաջ ածել զմը-
թերեալ չարութիւն իւր, այլ առեալ իւրն
օժանդակ եւ նպաստ զօձն եւ զնախամայրն
մեր, եւ եւս պատճառ եղեալ զպտուղ ծա-
ռոյն, եւ նոքօք որսացեալ ի չար կամս իւր
զբարի կամս նախաստեղծին եւ պատրեալ
խաբեաց զնս եւ հակառակ կացոյց առաջի
ստեղծողին իւրոյ, որով անիծիւք ետուր¹
եւ ի զրախտէն արտաքս ընկեց, եւ յաստ-
ուածային փառացն զրկեաց: Նոյնպէսակ
եւ յայժմուս գիւթս թունիցն եհեղ ի սիրտ
արանց ոմանց եւ արար իւր սարանեակս եւ
նոքօք հնարեալ բորբոքէր զհուրս նախանձու
եւ ատելութեան, յանտարկութեան եւ բամ-
բատանաց կամապաշտութեան եւ ինքնահա-
ւանութեան, որով հերձեալ օձտեաց եւ բա-
ժանեաց ի միմեանց զմի հօտն, եւ զմի հա-
ւանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, այսինքն
բաժանելով զմի ազգս Հայոց յերկուս կողմս
եւ յերկուս գէմս եւ յարոյց ի վերայ միմեանց:

Չար վարդապետ եղեալ եւ ուսոյց հա-
կառակիլ եւ մաքառիլ ընդ միմեանս ասելով
թէ՝ այլ է հաւատ մեր եւ այլ է հաւատ այ-

լոց ազգաց քրիստոնէից, ա՛յլ է նոցա եկե-
ղեցին եւ այլ մերն, եւ թէ զինչ իցէ մերս
միաբանութիւն ընդ նոսա, քանզի նոքա հեր-
ձուածողք են եւ բաժանեալք ի մէջ: Արդ
սե՛ս զինչ ասէ Տէրն յԱւետարանին. «Մա-
տուցեալ ծառայք տանուտեառնն եւ ասեն.
Տէ՛ր, ո՛չ սերմն բարի սերմանեցիր յապարա-
կին քում, արդ ուստի՞ ունիցի զորումն»: Պա-
տասխանէ Տէրն թէ «Այր թշնամի արար
զայն»: Այսպէս ի սկզբանէ մի ազարակ մի
սերմն միայն Քրիստոսի էաք, բայց յետոյ այ-
թշնամի սատանայ ի ձեռն չար մշակացն իւ-
րոց ցանեաց ի մէջ հաւատացելոց Քրիստոսի
զչար որումն բաժանման, եւ օձտեաց զմի
մարմինն Քրիստոսի, որով ընդդէմ դարձան
Առաքելոյն Պօղոսի որ գոչէ. «Մի հաւատ եւ
մի եկեղեցի», ապա թէ ըստ նոցա բանիցն
երկու հաւատ եւ երկու եկեղեցի է, ուրեմն
ի հարկէ լինի երկու Քրիստոս: Վասն որոյ
նշովեալ լիցի տողն այլ եւ հաւատացողն
այլ ի միայն Քրիստոսէ յԱստուծոյ մերմէ.
մանաւանդ զինեցան ընդդէմ Բանին Աստու-
ծոյ՝ որ ասէ. «Հայր, եղիցին սոքա մի՝ որ-
պէս եւ մեք մի եմք»: Տեսն՝ եղբայր,
Քրիստոս աղաչէ վասն միութեան հաւատա-
ցելոց եւ սոքա ջանան փռակտել զմիու-
թիւն հաւատացելոցս Քրիստոսի: Քրիստոս
պատուիրէ մեզ ասելով, մի՛ ասեր եզբօր-
քում մօրոս, իսկ սոքա յաչազանօք զպէսպէս
բարուրս (յօդեալ) եղեալ ի վերս միմեանս
հերձուածողս եւ ուրացողս կոչեն:

Վասն որոյ ընդդէմ եւ հակառակ երեւե-
ցան Քրիստոսի եւ Առաքելոց նորա եւ տոբն
զնշովս ի սրբազան Առաքելոյն Պօղոսէ որ
ասէ. «Եթէ հրեշտակ երկնից եւ կամ այլ ոչ
զայլ իմն քարոզեսցէ ձեզ, զոր մեք ոչ քա-
րողեցաք՝ նշովեալ եղիցի»: Դարձեալ Քրիս-
տոս Աստուածն մեր, յորժամ հանդերձեալ էր
առ Հայր գնալ՝ զսէր աւանդեաց մեզ ստնոյ
ստէպ պատուիրելով զայն: Իսկ սոքա զընդ-
դէմն եւ զհակառակն քարոզելով զատելու-
թիւն հառատեցին ընդ միմեանս: Արդ, ո՛չ
ապաքէն հակառակ եւ թշնամի երեւեցաւ
Աստուծոյ եւ քակտիչ սրբոյ պատուիրանի
նորա, որպէս զսատանայ զուսուցիչն իւր-

¹ Կ'երեւի թէ պէտք է ըլլայ եմար:

եանց : Եւ արդ այսու հակառակութեամբ յա-
ւելան օր ըստ օրէ եւ բորբոքեցին զհուրն
խոռովութեան , որ կիզիչ եւ տապալիչ է Ե-
կեղեցւոյն Աստուծոյ : Արդ հուրս այս նախ
յորբոքեալ յԱզրիանուպոլսէ , եւ համանգա-
մայն զամենայն աշխարհս հրդեհեաց , յորոյ
յորբոքմանէ տմենեքեան եղեն թշնամիք մի-
մեանց , եւ հանապազ մարտնչելով ընդ մի-
մեանս եւ բանակոիւ լինելով՝ մաքառէին
առ ի քակտումն եւ ի տապալումն որոյ ե-
կեղեցւոյն Աստուծոյ : Եւ որք զխոռովութիւնս
եւ զվրդովմունս յարուցին ի մէջ ազգիս մե-
րոյ , ոչ միայն ազգք տգէտք եւ ուսմիկք էին
այլ եւ ստաջնորդք եւ եպիսկոպոսոնք եւ
վարդապետք ոմանք , եւ այնքան յաճախե-
ցեալ ճարակեաց հուրս խոռովութեան , մինչ
գրեթէ զամենայն Ասիա եւ զԲոսփորա¹ որք
ընդ իշխանութեամբ Օսմանցւոց են քաղաքք
եւ գիւղք , պատճառ գտեալ եւ ասիթ եղեալ
ոմն Եփրեմ վարդապետ յարեւելեան տանէ ի
նահանգէն Ղափանու ,² որ առաջնորդ լեալ
էրդէնու եւ երբեմն Պատրիարք Կ . Պոլսոյ եւ
յաղագս ռիսակալութեան եւ քինարհագրու-
թեան իւրոյ զոր ունէր ծրարեալ ի սիրտ իւր
առ քահանայս եւ առ ժողովուրդս յոմանս :
Վասն որոյ զգիտող ժամանակս գտեալ , յա-
ռաջ հարկ յինքն զկոիւնս եւ զայլս ի նոյն
յորդորեաց եւ ի գլուխ էած զգայթակղու-
թիւնս զայս , մանաւանդ զսեւազուլսս³ զո-
մանս յօժանդակ անիրաւութեան իւրոյ , զարս
չատաշըջիկս , զօշաքալս , որք սիմանականաւ
ախարհ մոլեալք զնոսա օյնականս եւ նպաստ
արարեալ եւ ետ նոցա քարոզել զզանազան
հայհոյութիւնս ըստ սրբունւոյ Եկեղեցւոյ , եւ
առ այլ յաղագս Բրիստունէից , այսինքն բար-
գելով զգամագամ բարուրս ի վերայ նոցա ,

յորոյ զսակաւն ի բաղմաց յառաջակայ բա-
նիս լուիցես . քանզի մի ըստ միովէ գրել
զհայհոյանս նոցա եւ ինձ իսկ մեծ վտանգս
համարիմ : Վասն զի այնպիսի անճաշ խօ-
սիւք զահ եւ զսարսափումն արկանէին ի
յուշնկս եւ ի սիրտս պարզամիտ ժողովուրեան
մերոյ : Բանդի յորժամ լսէին՝ զաղրացեալ
սոսկային եւ ատէին զազգն Դաղմատացւոց¹
եւ Յունաց՝ իրբեւ զկռապաշտս :

Արդ այսու պատճառաւ ուսեալք ի նո-
ցանէ բազումք եւ բանակոիւ լինէին ընդ մի-
մեանս , եւ այնպէս զգազանային բարս ստա-
ցեալք ռիսային միմեանց՝ ասելով թէ «Դու
չես ի մէջ , քանզի Դաթուլիկ ես եւ ես Հայ
եմ» : Դարձեալ թէ՛ Դու Ֆոսնկ ես եւ ես
լուսաւորչի եմ» : Դարձեալ առ միմեանս այ-
պանելով զայլս , ասելով թէ «Եւ սա փ նո-
ցանէ է» : Եւ այնպէս նախատէին եւ հայ-
հոյէին զմիմեանս , եղբայր զեղբայր եւ հայր
զորդի , մայր զղուստրն իւր , սկեսուր զհարսս
իւր եւ աներ զփեսայս իւր , ժողովուրդն
զքահանայն իւր , եւ քահանայն զժողո-
վուրդս իւրեանց . հովիւք զհօտսն իւրեանց ,
անարգէին , ի դատ քարչէին , նզովէին եւ
բանադրէին եւ այնու ոչ շատացեալ այլ եւ
մատնէին ալլազպեաց եւ տային նոցա զիշա-
տել զհօտն Բրիստոսի , որ անբիծ արեամբն
իւրով ստացաւ , եւ այն՝ բազում չարչարանօք :
(Շարունակելի)

¹ Այսինքն Լաշինաց :

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ (*)

Ի Բ Ե Ն Ճ Ի Պ Ա Պ

Յիսուս Բրիստոսըն սիմասրեափ
ստիա կիւզէլ չիզկիւեր :

(Տեղամի)

Յիքրի սալիմ վէ ճիտտիյէթ սահիպի օլան
պիր միւտագլըզ իշուն եալընյոզ պու միւ-
լահազա՝ Յիսուս Բրիստոսըն թապիաթը հա-
գիգաթէն ինսանի վէ թապիի օլմալըլա պէ-
րապէր ինսանի մուզայէսէլէրաէն յէք եիւքսէք

(*) Տես թիւ 101, էջ 405 :

¹ Ըսել կ'ուզէ Երուսա :

² Եփրեմ Ղափանցի , երբք անգամ պատրիարք
եղած է . տ . 4684էն 4686 .— ք . 4694էն 4698 .— գ .
1700էն 1702 .— «Եփրեմ խոռվատէր պատրիարք եղաւ
որ առաջին անգամ բոլոր Տաճկի Տէրութեան մէջ
ուղղափառաց գէմ հայածանք հանեց (1700)» : Ըստ-
կարեան , Եկ . Պատմ . էջ 399 :

³ Սեւազլուխ բառը ժամանակին առումով կը
նշանակէ ընդհանրապէս եկեղեցականները եւ թարգ-
մանութիւն է Գաղապառ թրքական բառին :

տիր. ֆագաթ պէն տահա զիյատէ հայրէթ պախշ
օլան տիկէր պիր խասսէ, թարիֆի զայրը
զապիլ պաշգա պիր հալինի տախի բիշի նա-
զարընդա արզ իտէճէյիմ: Օնուն ախապի
կիւզէլլայինին հուտուտընը պուլամատըգ.
չիմաի ծնուն շախսիյէթինին հուտուտընը
թէհարրի իտէլիմ: Շախսիյէթի թահտիտ էյ-
լէյէն զէման, մահէլլ վէ գալմ տըր: Պիր
քիմսէ հէր նէ գատար պէօյիւք տէ օլսա,
կինէ ֆէլան հէրտէ տօղմուշ, ֆէլան հէրտէ
պէօյիւմիւշ, ֆէլան գալմըն գանընտան նէ-
չէթ իթմիշ օլսար վէ օ գալմըն ալայիմինի
իւզէրինտէ համըլ պուլուռնուր: Պագընըգ էն
պէօյիւք Վիմսէլէրէ, մուլթալգա քէնտի զէ-
մանլարընըն աստէմլէրի տիրլէր, մուլթալգա
օ զէմանըն մէնաֆիի, մէրագը, մէսէրրէթ վէ
իյթիրապաթը իլէ մէլուֆ տըրլար: Պու հալ
տիրօմաթլար, վազիի գանուռլար վէ ճիհան-
կիրլէր հագգընտա պիլէ թէհագգուգ իտէր:
էյէր զէմանլարընըն աստէմի օլմասալարաը,
տիւնհայը իտարէ իթմէք, եիւքսէլթմէք
իշին նէյէ իսթինատ էտէպիլիլլէրտի: Լա-
քին, ֆիքրի սաֆ սահիպի օլան քիմսէլէր,
հալը ինզիլմատա տիւշիւնէլէր, շաիրլէր,
ֆէլէսօֆլար, սանաաթկիւզարլար, հալընըգ
իտէլըն բէրէսթիշինէ վապֆը նէֆս էթմիշ
օլանլար պէշէրիյէթտէն տահա իլէրի կիթ-
տիքլէրի վէ զիքըլէրի տահա ուզուն սիւր-
տիւյիւ հալտէ մամաֆիյէ պուռլարտա քէնտի
զէմանլարընըն աստէմի օլմամըշլարմը: Աճէպա
ինչատ էյլէտիքլէրի մանգուլմէլէրին պէյթ-
լէրի արապընտան՝ պէշէրիյէթին սէսիյէ պէ-
րապէր՝ մէնսուպ օլտուզլարը զէմանըն սէ-
տապտա իշիտիլմէյօրմու: Աճէպա կէօյիւս-
լէրինտէն եիւքսէլէն բուհը պէշէրին ահու-
զարլա, պուլուռնուրգլարը զէման ճէմաաթ-
լարընըն, ասընըն, վէ պու ահուզար չէքէն,
սուա իտէն, աղլայան, մուզթարըպ օլան վէ
սէվէն բուհըն հաշատըղը մէմլէքէթին ահ-
վալը բուհիյէսի քէչֆ օլունմազմը, էն մէշ-
հուրլարընը թատատ էյլէ, Հօմէր, Յօլը-
էսքիլ, Նսայի, Սօգրաթ, Ֆիթիա, Սօֆօկ-
լէս, Բլաթօն, Վիլթիլ, Թասիթ, Տանթէ,
Միքէլ Անտ, Շէյքսպիր, Միլթօն, Գօրնէյլ,
Բասին, Պօսիւէ քիմլէր տիրլէր: Նունանիս-

թանըն, Արապիսթանըն, Եհուտիսթանըն,
պիւթթէրէսթ Բօմանըն, քրիսթիան Իթա-
լիանըն, Ֆրանսանըն, Ինկիլթէրրանըն հէյ-
նէթի միւճէսսէմէլէրի տէյիլմի տիրլէր: Շու-
րասընատա տիգգաթ օլունսուն քի պուռլար-
տան էն նամաարլարը, պէշէրիյէթին տէ-
հասըյա պէրապէր, տօղրուտան էվլատը
պուլուռնուրգլարը պէշէրիյէթին պու գըսմընըն
տէհա վէ խասսէլէրինի տահա միւքէմմէլ
սուրէթտէ քէնտի իւզէրլէրինտէ թէճէսսիւմ
իթտիրիօրլար: Հօմէր տէմէք պէօյիւք Բէ-
լասճ գալմը տէմէք տիր, էսքիլ տէմէք պէ-
յիւք Նունան տէմէք տիր: Յօր տէմէք պէօ-
յիւք Արապ տէմէք տիր: Նսայի տէմէք պէօ-
յիւք Իպրանի տէմէք տիր: Թասիթ տէմէք
պէօյիւք Բօմալը տէմէք տիր, Տանթէ պէօ-
յիւք Իթալիան, Շէյքսպիր՝ պէօյիւք Ինկիլ-
լիզ, Պօսիւէ տէմէք պէօյիւք Ֆրանսըգ տէ-
մէք տիր: Նա Յիսուս Բրիստոս նէ տիր: Նէ
Իպրանի տիր, նէ Նունանի տիր, նէ էսքիլ
տիր, նէ Եհնի տիր, էօյլէ իտէն տիր: Ա-
տէմ տիր, հաթթա պիլգաթ ինսան քէնտի.
սի տիր: Պաշգալարընտա թէքմիլ ինսանիւէ-
թի պուլմազմըն, սայիր ինսանլար իւզէրին-
տէ պէշէրիյէթին սինօրլարընա կէթիշէպի-
լիսին, հալպուքի Յիսուս Բրիստոս իւզէ-
րինտէ պու չէյ գաթիէն գապիլ տէյիլ տիր:

Տիգգաթա շայան տըր քի, Յիսուս Բրիս-
տոսըն պու ումուլիյէթի, պու իհաթապը
շախստան մահրումիյէթլէ տէյիլ տիր: Յի-
սուսընքինտէն զիյատէ եիւքսէք, ծնունքին-
տէն զիյատէ աչըպտան աչըպա իզհար օլուն-
մուշ օլան պիր շախսիյէթ վազը օլմուշմը
տըր: Պէն քէլիմսինի Յիսուստան զիյատէ
ամիրսնէ քիմ իսթիմալ իթմիշ տիր: Օնուն-
քինտէն տահա միւքէմմէլ պիր իսթիզլալ նէ-
րէտէ պուլուռնըր: Արայընըգ քիմէ՝ պիր մէր-
պուլթիյէթի վար տըր, ամիրի քիմ տիր:
Քէնտիլիյի ալգըշայան խալգ տէյիլ տիր,
շակիրտլէրի տէյիլ տիր, մէնսուպ օլտուզը
ասըր տէյիլ տիր, քէնտինի իհաթա իտէն
էֆքեար վէ տապպոտ տէյիլ տիր: Օնըն ա-
միրի օլմազլա գաթիէն հիշ պիր քիմսէ իֆ-
թիխար էտէմէմիշ տիր: Պինաէն ալէյհ, քէն-
տի շախսիյէթինին ճէլալէթիլլէ պու էմաալ-

սըզ ու մոռնայեթի իհրազ իթմիշ տիր։ Մովսէս՝ ասլնիտան զիյատէ, քէնտի նազարիյաթըյա, հիսսիյաթըյա, ախլազ վէ իթիատաթըյա ետհուտի ախլ։ Սօզրաթ տալա պիր ետհանիլիքտէն եօզարը չըզամտմը տըր։ Մուհամմէտ Արապ իտի, Լաֆօնիթէն վէ Մօլիէր օ տէրէճէտէ Ծրանսըզ տըրլար քի Ծըրանսըզլարըն կէօթէտէն միւթէլէզլիզ օլտուզլարը գատար Իսկիլլէյի օ իթիսինտէն մահլուզ օլուրլար։ Պու պէօյիւք ստէմլէրին քեաֆֆէսինտէ քէնտի մահլէլէրինէ մախսուա, կէչիճի ճիհէթլէր վար տըր քի ովկիանսըն ետիօտ ճէպլէլին օպիր թարաֆընտա պուշլար անլաշլմազ, հէր թարաֆտա օնլարա պէնպէնիլէմէզ, տար իլէ կէչէրլէր վէ պազը տէֆա տիկէր պիր տար իլէ թէքըրար ըտնիւմա օլուրլար, ֆազաթ թէքըրար տա զաիլ օլուրլար։ Իշթէ պու աշվալը զարիպէ օնլարըն՝ հէր նէ գատար ինսանլար մէյանընտա էն պէօյիւքլէրի իտէլէրալ, երնէ սատէ պիր ինսան օլտուզլարընտ տէլալէթ էտէրլէր։ Յիսուս Քրիստոստա պէօյլէ պիր շէյին էսէրի պիլէ եօզ տըր, օնուս սիմսը իւզէրինտէ պու գապիլի զէվալ ճիհէթ մէֆգուտ տըր։ Էվլէթ, օրատա ինսանիյէթ կէօրիւնիւր, ֆազաթ պէշէրիյէթի թահաիա էյլէյէն հիշ պիր նօգիթայա ըսաթ կէլինմէզ։ Իշթէ պու սէպէպտէն Յիսուս՝ ումուսըն քէնտիսինէ պէնպէմէսի իշիւն արզ օլուսմը պիր նիւմուսէի ումուսի տէր։ Պիլճիւմէլէ ինսանըն չօճազ, կէնճ զըզ, վալիտէ, իսթիյար չազլարը օնը թազլիտ իտէրլէր։ Հէր սընըֆը իտալ՝ զէնկին, ֆազիր, զընտան քէօշէսինտէքի զէնճիրպէնտ մահլուս, թախթը սալթանաթտա պուլուսան հիւքմտար, օնտա պիր թէսէլի, պիր գուզվէթ պուլմազ իշիւն օնա եազլաշըրլար։ Տիւնեանըն հարաքէթի, մէտէնիլէթին ինգիլալը՝ սահնէ իւզէրինէ պօշ եէրէ եէնի ապթէօրլէր կէթիրիյօրլար, Յիսուս Քրիստոս օնլարըն հիշ պիրիսի իշիւն տէ եապանճը տէյիլ տիր։ Ֆէլսէֆէ իլէ բէք չօզ մէշղուլ օլմազ, ֆազաթ ետհանի իշիւն պրիկանէ տէյիլ տիր։ մուհարէպլէրտէ իհրազը զալէպէ իթմէիշ տիր, մամաֆիյի Ռօմալը իշիւն քէնտիսի պիր եապանճը տէյիլ

տիր։ Թապիաթճա, ախլազճա, առէթճէ, ֆիքիրճէ հիշ պիրպիրինէ միւշապէհէթի օլմայան տէօրալնճի տալը պարապըրլա եիրմինճի տար միւթէմէտտինի օնը թանըրլար։ Ամէրիգանըն գըրմըզ տէրիլիլէրի, Աֆրիգանըն զէնճիլէրի, Հինտիսթանըն Պրահմանլարը օնա սէճտէ իթտիլէր վէ պու սէճտէ՝ պօզուլմուշ օլան Պիզանս Ռօմալըրը արաաընտա հուսուլա կէթիրաիյի ախի ֆազիլէթլէրի օնլարըն արաաընտա տախի հուսուլա կէթիրմիշ տիր։ Պու սիմա ու սուրէթին ումուսի, ճազիպէլի օլտուղընա, օնա եազլաշապիլմէսի վէ պէնպէմէսի հէր քէս իշիւն վէ հէր եէրտէ գապիլ իտուկինէ իշթէ պու տա պիր տէլիլ աիր։

(ԻՄասլաի վար)

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ս.

«Նայէ որ մարդասէր ըլլաս,
«հանոյակասար, քաղցրաբար»
«հեզ, բարեկիրք եւ բարեմոյն,
«եւ պիտի ըլլա սիրելի»:

«Նայէ՛ որ մարդասէր ըլլաս, հանոյակասար,
քաղցր, հեզ».

Եթէ մարդիկ գիտնային, թէ, ո՞րչափ զիւրին է իրենց՝ իրենք զիրենք սիրել տալը, և սիրուած ըլլալուն հաճոյքն ալ ո՞րչափ քաղցր և փափուկ, մարդ պիտի չըլլար որ զայն ունենալ չփափաքէր։ Ստուգիւ չկայ մէկ մը, որ բաւական է թէ զգայուն ծնած ըլլայ, որ չախորժի սիրուած ըլլալէ. բայց նոյնչափ ալ ստոյգ է թէ, քիչեր կը գտնուին որ անկեղծաբար սիրուած ըլլան, ինչու որ չուզուիր սիրուելու միտկ միջոցը ի գործ դնել, որ է ինքզինք սիրելի ընծայել։ — Եթէ կ'ուզես այդպէս ըլլալ, հոս քեզի ներկա-

(*) Տես թիւ 400, էջ 392.

յացուած և իմաստութեամբ լի սկզբունքը պահէ։ Ատիկա կը բովանդակէ յինքնեան այն ամէն բանը, որ կրնայ անվրէպ քեզի շահեցընել այն անձանց սէրը, որոնց հետ ապրելու պարտաւոր ես, և ատով քեզի վայելել տալ ամենաքաղցր, անխառն և ամենահաստատա երջանկութիւնը, զոր հնար է մարդուն վայելել այս կենցաղի յարաբերութեանց մէջ։

Ա.

«Նայի՛ որ մարդասէր ըլլաս»

Բոլոր սիրտերը սիրաշահելու ապահովագոյն միջոցն՝ ուրիշներուն ծառայութիւն մատուցանելը սիրելն, զանոնք երախտապարտ ընելն է։ Եթէ երբեք բանականութիւնն և կրօնքն մեզի պատուիրած չըլլային ուրիշին ծառայութիւն մատուցանելու սէրը, ուրիշին ընելով այն բանը, զոր իրաւամբք պիտի ուզէինք որ ուրիշները մեզի ընեն, պէտք էր որ մեր անձնական շահն զմեզ ատոր մղէր։ Եւ նախ, այն որ միայն իր անձին համար բարի է, շատ գէշ մարդ է։ Նոյնքան անիրաւ և արհամարելի քաղաքացի մ'է, վասն զի ընկերութեան օգուտները կ'ուզէ վայելել, և իր կողմանէ ամենեւին բան մը չդնել։ Ինչո՞ւ համար հասարակութեան բարիքներէն չի հրաժարիր, եթէ չուզեր իր կողմանէ անոր օգնել։ Եթէ ինք ուրիշ մարդիկներէն ծառայութիւններ կ'ընդունի, ասիկայ միթէ գաշն կամ յանձնառութիւն մը չէ՞ որ ինքն ալ ի փոխարէն անոնց իրեն ծառայութիւնները մատուցանէ, և փոխադարձ պարտքերը զլանալը միթէ անիրաւութիւն մը չէ՞։ Եւ, բաց ստոյի, ի՞նչ կրնանք ակնկալել Աստուծմէ, եթէ միւս մարդերն, որ հաւասարապէս իրեն զաւակներն են, մեզմէ ակնկալելիք բան մը չունենային։ արժանի կ'ըլլայինք արդեօք, որ զմեզ իրիւս իւր որդիները նկատէ, եթէ մենք իրենց հանդէպ եղբայրական սէր չտածէինք։ Ուրիշները երախտապարտ ընելն՝ տոկոսով փոխ տալ, և ինքն իրեն երախտապարտ ըլլալ է յաճախ։

Կարգինալ Ալպէրօնի մեծ բախտաւորութեան պատճառ ևզաւ ծառայութիւն մը, զոր ինքը մատուց, և ահա ինչպէս։ Գամբիս-

թրօն բանաստեղծն յիտալիոս ճամբորդութիւն կ'ընէր։ Բարմայի դքսութեան ծովազրէն անցնելու պահուն, աւազակները վրան յարձակեցան և զինքը նոյն իսկ իր զգեստներէն մերկացուցին։ Կիսամերկ՝ ամենամօտ գիւղը ապաստանեցաւ, և այս այն գիւղն էր, ուր Ալպէրօնի ժողովրդապետ էր։ Գամբիսթրօն այդ եկեղեցականին առատաձեռնութենէն օգնութիւն գտաւ, անկէ զգեստներ և դրամ ընդունեցաւ իր ճամբան շարունակելու համար։ Քանի մը տարի ետքը Վանտօմի Դուքսին հետ քարտուղարութեան պաշտօնով, Իտալիոյ պատերազմներուն առթիւ, իր բարերարին ժողովրդապետութեան մօտերը եկաւ։ Եւ որովհետեւ այդ իշխանը տեղացի մէկու մը պէտք ունէր, բանաստեղծը ասիկա առիթ առնելով, Ալպէրօնի վրայ խօսք բուցաւ անոր։ Ժողովրդապետը կանչուեցաւ որ Գամբիսթրօնին իր մասին տուած տեղեկութիւնները լիովին արդարացուց։ Իշխանը զայն մատրանապետը անուանեց։ Ալպէրօնի անոր հետ Սպանիա անցաւ, ուր Իւրսէններու իշխանուհւոյ վստահութեան արժանացաւ։ Վանտօմի դուքսին մահուընէն յետոյ անոր քով պաշտօն ստանձնեց, Բարմայի դուքսին գործակատարը եղաւ Մատրիտի արքունեաց մէջ, Բարմայի իշխանուհւոյ և Սպանիայի թագաւոր Փիլիպպոս Ե-ի ամուսնութեան գործը զուլս հանեց, Թագաւորական խորհրդոյն խորհրդական անուանուեցաւ, Կարգինալ և վերջապէս սպանիական տէրութեան առաջին նախարար եղաւ։

Եթէ մեծամեծք, եթէ բարձր պաշտօնի զլուխ գտնուող անձինք և կամ հարուստները ուրիշ մարդկանց վրայ առաւելութիւն մը ունին, անտարակոյս ուրիշներուն յաճախ հաճոյք պատճառելու առիթներու մէջ զըտնուելին է։ Իր իշխանութիւնը, իր ազդեցութիւնը, իր հարստութիւնը գործածելու ասկէ աւելի քաղցր, ասկէ աւելի ազնիւ ի՞նչ բան կրնայ ըլլալ։ Մարդասէր չեղող շատ մը անձինք ուրիշներու ծառայութիւն ընելէ զերծանելու համար, նոյններուն ապերախտութիւնը իրենց պատրուակ կ'առնուն։ Հիմա աշխարհիս վրայ այնչափ ապերախտութիւն

կայ, կ'ըսեն, երբեմն մարդ անչափ նեղութիւն կը կրէ՝ բարիք ըրած ըլլալուն համար, որ միշտ կը զղջայ զայն ընելու։ Բայց կ'ուզեմ որ երբեք բարիք ըրած ըլլալուդ համար չզղջաս, ջանա՛ որ բարիքներդ ընտրութեամբ ընես, արժանեաց և առաքինութեան ծառայութիւն մատուցանես։ և կամ լաւ եւս՝ մարդկանց բարիք ըրէ, անոնց յաւիտեանական և հասարակաց հօր, Աստուծոյ հաճելի ըլլալու նպատակով։ Բարիք ըրէ՛ նմանելու գիտաւորութեամբ անոր բարութեան, որ անոնց բարիք ընելէ չի դադարիր, և այս նշաններով է որ զմեզ պիտի ճանչնայ թէ իր որդիներն ենք։ Եթէ դուն մարդիկներէն ապերախութիւն պիտի տեսնես, երբեք Աստուծոյ կողմանէ զայն չպիտի տեսնես։ Այս է միայն հաստատուն պատճառը, որ կրնայ քու բարեացակամութիւնդ արծարծել։

Հետեւեալ հատուածին մէջ կ'ապացուցուի թէ՛ երբեմն ամենախոնարհ դասակարգի մէջ ևս այս վերեւ ըսուած ազնիւ զգացմունքը երեւան կու գայ։ Իտալիոյ Վենետիկ նահանգին մէջ Ատիճէ գետը ողողած ըլլալով, Վէրօնա քաղաքին կամարջը ջուրերէն քշուեցաւ, մէջտեղի կամարէն զատ, որուն վրայ տուն մը կը գտնուէր, և Հոն ամբողջ ընտանիք մը կար, որ ինչպէս գետեզերքէն կը տեսնուէր, բազկատարած օգնութիւն կը խնդրէր։ Բայց հեղեղին բռնութիւնը հետզհետէ կը քակէր միացած կամարին սիւնը։ Այդ ծանր վտանգին մէջ Սքոլվէրինի կոմսը հարիւր տուքաթի քսակ մը կը խոստանայ անոր որ համարձակի նաւակով մը երթալ, և այդ թշուառները ազատել։ Սակայն ատոր ձեռնարկողը կամ գետին բռնութենէն քշուելու, տարուելու, և կամ այդ կամարին մօտեցած պահուն, անոր վրայէն ինկող փլատակներուն տակ ջախջախուելու վտանգին կ'ենթարկէր ինքզինքը։ Անթիւ բազմութիւնը գետեզերք խոնուած էր, բայց ոչ ոք կը համարձակէր այդ առաջարկը յանձն առնուլ։ Նոյն միջոցին գիւղացի մը հոնտեղէն կ'անցնէր. ատոր կը հասկցնեն կոմսին առաջարկը և խոստացած վարձատրութիւնը։ Այդ մարդը իսկոյն նաւակ մը կը նստի, թիավարելով գե-

տին մէջտեղը կը հասնի։ Կը մօտենայ կամարին և սիւնին տակ կը սպասէ որ բոլոր ընտանիքը, հայր, մայր, տղաք և ծերեր, չուանի մը վրայէն սահելով նաւակ իջնեն։ Քաջալերուեցե՛ք, ահաւասիկ վստահեմ ազատեցանք կը պոսայ։ Դարձեալ կը սկսի թիավարել և ջուրերուն բռնութեան զէմ մաքառելով գետեզերք կը հասնի։ Սքոլվէրինի կոմսը խոստացած վարձատրութիւնը կ'ուզէ անոր տալ։ Ես իմ կեանքս չեմ ծախսեր, կը պատահանէ գիւղացին, իմ աշխատութիւնս գիս, իմ կիցս, իմ զաւակներս կերակրելու կը բաւէ. այդ գումարը այս քուտաւ ընձանիքին տ'ը, որ ինձմէ աւելի ասոր պէտք ունի։

Թէպէտեւ, որչափ հնար է, ամէնուն բարիք ընելու է, բայց զայն խոհեմութեամբ ընելու է, եթէ երբեմն խաբէութեան զոհ ըլլալ չուզուիր։ Դիւղի մը փողովրդապետը, որ փորձով սորված էր ասիկա, մեծ քաղաք մը երթալու պատրաստուելով, այլեւայլ անձինք իրեն յանձնարարեցին իրենց համար գնուելիք բաները եւ անոր խոստացան որ ի դարձին ծախք ըրած զրամը իրեն պիտի հատուցանէին։ Փողովրդապետը ամէնն ալ յանձն առաւ եւ մեկնեցաւ։ Քաղաք հասնելով մէկուն ուղածները միայն գնեց, որ իրեն զրամ տուած էր։ Ի դարձին գնած բաները իր տիրոջ յանձնեց։ Միւսները կը յուսային եւ կը սպասէին թէ իրենց յանձնարարածներն ալ իրենց պիտի յանձնէ։ Փողովրդապետը անոնց ըսաւ թէ գժբախտութիւն մը հանդիպած էր, այսինքն բոլոր իրենց տուած թուղթերը զրատահանի մը վրայ դրած ըլլալով, հովը բաց պատուհանէ մը զանոնք առած տարած և վարէն անցնող գետին մէջ ձգած էր, ի բաց առեալ այս ինչ անուն անձին թուղթէն, որ նոյնին մէջ իր ստակը ծրարած ըլլալով, հովը չէր կրցած զայն ալ միւսներուն հետ տանիլ։

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- Յուլիս 13 † Կիր. ած Գ. — Զկնի Վարդավառի
 14 Բշ. ալ. Սրբոց ԺԻ. Մարգարէից
 15 Դշ. ղժ. Աքանագինեայ եպ. ին եւ ասոն
 առաքելացն նորին եւ հինգ
 վկայիցն: Եւ սրբոց վկայիցն
 Անտոնինոսի, Թեոփիլոսի,
 Անիկսոսի եւ Փոսինոսի
 16 Դշ. ղժ. Պանոց
 17 Եշ. ղժ. Սրբոց Մակարայեցոցն
 18 Ուրբ. ղժ. Պանոց
 19 Շք. ղժ. Սոփիայ եւ երից դստերացն
 Պիսիսի, Ելիսի եւ Ագա-
 պեայ:

Մ Ե Ծ Ն Ն Ե Ր Ս Է Ս

Մեծն Ներսէս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
 Հայրապետներուն ամենէն երեւելիներէն մին, որդի էր
 Աթանազիէի, Ս. Լուսաւորչի թոռնորդին:

Իր նախնական դաստիարակութիւնը առաւ իր
 մեծ հօրէն, Ս. Յուսէի Հայրապետէն, և մատաղ հա-
 սակին մէջ զրկուեցաւ Կեսարիոյ գաղութները, ուր շատ
 զարգացաւ յունական իմաստասիրութեան և կրօնա-
 կան գիտութեանց և ամէն տեսակ առաքինութեանց
 մէջ:

Կեսարիայէն Կոստանդնուպոլիս անցաւ և հոն
 աւելի առաջ տարաւ իր ուսումը և առաքինութիւ-
 նը, և շատ սիրելի եղաւ նոյն տեղւոյն Հայերուն և
 Յոյներուն Ամուսնացաւ Ապիտոնս անուանով երեւելի
 իշխանի մը աղջկան հետ և անկէ ունեցաւ որդի մը,
 որ կոչուեցաւ Իսահակ, որ և ապա հայրապետական
 աթոռը բարձրացաւ:

Երբ վախճանեցաւ Հայոց Փառնեբոհ հաթողի-
 կոսը, Տի. սնեան Արշակի Թագաւորութեան երկ-
 րորդ տարին, Հայաստանի եպիսկոպոսները որ լաւ
 տեղեակ էին Ներսէսի բարեմասնութեանց, Թագա-
 ւորին և նախարարներուն հետ ժողով գումարելով,
 զինքը ընտրեցին յաջորդ Ս. Գրիգորի, և անմիջապէս
 պատուիրակութիւն մը զրկեցին Կոստանդնուպոլիս Ս.
 Ներսէս եկեղեցւոյ բարեղոյն համար հարկադրուե-
 ցաւ յանձն առնուլ ազգին հրաւերը:

Ապա Ս. Լուսաւորչի պէս առաջ փառք զրկուեցաւ
 Կեսարիոյ, Եւսեբիոս հայրապետէն եպիսկոպոս ձեռ-
 նադրուելու համար Զեռնադրութեան պահանջ Ս.
 Հոգին աղաւանակեալ իջաւ Ս. Ներսէսի վրայ, և երբ
 հայրապետական պատարագը մատուց, եկեղեցւոյն
 վրայ հրեղէն սիւն մը երեւցաւ և լսուեցան երկնա-
 ւոր զօրաց ձայներ որ երեքորդեան օրհնութիւնը կ'եր-
 գէին: Եկեղեցիէն ելած ժամանակ Սուրբին գէմքը

պնդափ կը փառէր որ չէին համարձակեր անոր նայե-
 լու: Ինչպէս ասեցով Հրեաները չէին կրնար դիտել
 Մովսէսին գէմքը: Ամէնքը հիացած էին և երանի կու
 տային այն ազգին որուն Աստուած այսպիսի հայրա-
 պետ մը շնորհել հաճեր էր:

Ս. Ներսէս Հայաստանի դարձաւ մեծ փառքով և
 ճամբան ուսկից որ կ'անցնէր մեծ պատիւ ու մեծա-
 րանք կ'ընդունէր ամենէն, սրտը լսեր էին ձեռնա-
 դրութեան ատեն պատահած հրաշքները: Սուրբը
 զամէնքը կ'օրհնէր և շատ հիւանդներու ալ բժշկու-
 թիւն կը շնորհէր: Հայաստանի որ մտաւ Արշակի Թա-
 գաւորը իր նախարարներուն և զօրաց հետ գիմացը ե-
 կաւ Առիւծ լերան վրայ, և տաւա տարաւ զինքը
 պատուով Վաղարշապատ: Ամբողջ ազգը անպատմելի
 ուրախութեամբ լցուեցաւ, որովհետեւ Ս. Ներսէսի
 վրայ կը տեսնէր Ս. Գրիգորի առաքելական եռան-
 դուն հոգին:

Ս. Ներսէս անմիջապէս ձեռք զարկաւ վերանո-
 րդելու հայ եկեղեցին և զայն բարձրացնելու Ս. Լու-
 սաւորչի ժամանակին բարգաւաճ և պայծառ վիճա-
 կին: Ծոյլ և թուլամորթ մարդոցմէ մեծուած ան-
 կարգութիւնները արմատախիլ ըրաւ եկեղեցւոյ մէջէն
 և Յունաց աշխարհին մէջ տեսած բարեկարգական օ-
 ղէնքներն ու կանոնները խնաց հոն տակաւ առ տա-
 կաւ հաստատելու: Անձամբ և ընտիր պաշտօնեանե-
 րու միջոցաւ ամէն տեղ բարիք կը տփռէր. տգէտ-
 ները կը հրահանգէր, մոլորեալները դարձի կը բերէր,
 անուղղաները կը յանդիմանէր և խնամք և սէր ցոյց
 կու տար թշուառներուն և աղքատներուն: Սուրբին
 օրինակին հետեւելով շատեան ալ առատ ողորմութիւն
 կու տային կարօտեալներու և եկեղեցիներու:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻՒ՝ ԳՐԵՆ

Գրիգ. Ա.—Գլ. ԺԱ.—Խաղաղութիւն ստանալու
 և յառաջդիմութեան եռանդին վրայ: (Շար.)

Երբ ամեն օտար մեկ մոլորիւն արմատախիլ ը-
 նիկնի, շուտով այր կասարեալ կ'ըլլայիկն:

Իսկ հիմա ասոր հակառակը կը նշմարենք. անանկ
 որ ի սկզբան անդ մեր դարձին՝ աւելի յաւ եւ աւելի
 մաքուր էինք քան յիս օր ուսանողն ու յառաջդիմութիւն
 ամեն օր անհր. իսկ հիմա մեծ քան կը համարուի
 երբ մեկը առջի եռանդին մեկ մասը կարողացած ըլ-
 լայ պահել:

Երբ ի սկզբան անդ փոքր ինչ բռնութիւն գործա-
 ծած ըլլայիկն, ան ասեւ պիտի կարենայիկն ամեն
 քան ընկել հեշտեալ եւ ուրախութեամբ:

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

ՊԼՈՒԹ Բ.

Սուրբ Սրբի ջերմեռանդութեամբ առարկան

Հ. Այս ջերմեռանդութեամբ ի՞նչ կը պատուենք :

Պ. Կը պատուենք կրկին առարկաներ . մին նիւթական ու խորհրդանշական , որ է ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Տեառն մերոյ մարմնեղէն Սիրտը . իսկ միւսը աներեւոյթ ու հոգեւորական , որ է ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Տեառն մերոյ Սէրը :

Հ. Այս ջերմեռանդութեան մէջ մեր պատուած այս երկու առարկաներուն գլխաւորը ո՞րն է :

Պ. Հոգեւորական առարկան է , Տեառն մերոյ սէրը , որ նաեւ այս ջերմեռանդութեան առաջին շարժառիթն է :

Հ. Այս հոգեւորական առարկան ի՞ր արժանապատուութիւնը կը հաղորդէ՞ մարմնեղէն առարկային :

Պ. Այո՛ , կը հաղորդէ անոր ի՞ր արժանապատուութիւնը . հասեալաբար այն ազօթքներն ու պաղատանքը զորոնք կը մատուցանենք ՅԻՍՈՒՍԻ Ս . Սրտին եւ այն յարգանքն ու պատիւները զորոնք կ'ընծայենք անոր , աներեւութաբար կ'ուղղուին ամբողջ Անձին . մարմնաւոր Սրտին կ'երկրպագենք ի՞ր աստուածային անձին մէջ , Աստուածային Անձին կ'երկրպագենք մարմնաւոր Սրտին մէջ . այս տարբերութեամբ սակայն որ Անձին երկրպագութիւն կ'ընենք իրեն համար ուղղակի , ու Սրտին կ'երկրպագենք՝ Անձին անհուն գերազանցութեան պատճառաւ :

Հ. Այս ջերմեռանդութեան առարկային վրայ կը խաբուի՞ն արդիօք անոնք որ լսելով Ս . Սիրտ Յիսուսի բառերը՝ իրենց բոլոր մտածմունքները կը սահմանափակեն նիւթական սրտին եւ կամ զայն կը նկատեն զրեթէ այնպէս՝ ինչպէս պիտի ընէին սրբոց նշխարի մը վերաբերմամբ :

Պ. Այո՛ , այնպիսիները կը խաբուին , որովհետեւ այս մարմնեղէն Սիրտը պէտք է

նկատել իբրեւ անբաժանելիօրէն միացած ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ հոգւոյն ու երկրպագագելի Անձին , եւ որ իրականապէս կ'ապրի Աստուծոյ Որդւոյն կենդանի կուրծքին մէջ :

Հ. ՅԻՍՈՒՍԻ Սիրտը մաս մը ունի՞ գոյացնելու մէջ այն սէրը որ այս ջերմեռանդութեան հոգեւորական ու գլխաւոր սուրբական կը կազմէ :

Պ. Սիրոյ գործողութեանց մէջ նիւթական սրտին ունեցած մասը առանց ճշգրտութեան չիւննա՞նք ինչպէս նաեւ աստուածութիւնը կ'ընդունի՞ որ այս գործողութիւնները աւելի զգալի կ'ըլլան սրտի մէջ , որուն մէջ իրենց հակազդեցութիւնը կը ներգործեն : Այս իմաստով է որ երանուհի Մարգարիտա-Մարիամու երանացոյցման կոնգակին մէջ Պիոս Թ . ՅԻՍՈՒՍԻ Սիրտը կը հռչակէ «ՍԹՈՌ ԱՍՈՒԱՅԱՅԻՆ ՍԻՐՈՅ» :

Հ. Այս երկու առարկաները , ՅԻՍՈՒՍԻ Սիրտը եւ ՅԻՅՈՒՍԻ Սէրը , զատ զատ կը պատուուի՞ն այս ջերմեռանդութեան մէջ :


Պ. Ո՛չ , այս երկու առարկաները թէպէտեւ իրարմէ զատ են , սակայն իրարու միացած են եւ մենք զանոնք կը պատուենք անբաժանելի կերպով . այնպէս որ կրնայ ըսուիլ թէ այս ջերմեռանդութիւնը իրականին մէջ միայն մէկ առարկայ ունի , մարմնեղէն Սիրտը որ իբր խորհրդանշան , կը յիշեցնէ ՅԻՍՈՒՍԻ Սէրը , կամ եթէ ուզուի , ՅԻՍՈՒՍԻ Սէրը՝ զոր կը ներկայացնէ իբր խորհրդանշան ի՞ր մարմնեղէն Սիրտը :

Հ. Այս վարդապետութիւնը ի՞ պաշտօնէ կ'ուսուցուի՞ եկեղեցւոյ մէջ :

Պ. Այո՛ , Արարողութեանց Ս . Ժողովը՝ Ս . Սրտին տօնը սահմանող ի՞ր 1765ի վճռագրոյն մէջ կը յայտարարէ թէ Ս . Քահանայապետն Կղեմէս ԺԳ . իրաւամբ փափաքելով տեսնել որ հաւատացեալները առաւելագոյն եռանդով պատուեն ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԱՅԱՅԻՆ ՍԵՐԸ Ս . ՍՐՏԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻՆ ՆԵՐՔԵՒ , չնորհեց այս տօնախմբութեան հանդէսը :

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՔԻՒՋԻՒՔ ՍԵՐՈՎԵՍԻ



Այլահ մուհապէթիյլէ հանմը թուրուշ-մըջ օլան պու բուհըն իւզէրինտէ պիր տէ ֆէվզէլատէ գարտաշ մէհապէթի վար իտի: Քէմալը շէվզ իլէ տայիմա էպէվէնի, տօթ-լարը, ագրապասը վէ հաթթա թանըմատըզ-լարը քիմէլէր իչիւն տուա իտէրտի: Քէնտի թապիրի իւզրէ պիր «տիլէնճի էֆէնարի»յէ բասթ կէլիպ տէ վէրէճէք բարասը օլմասայ-տը, հէման օ ֆապիրէ պօլ սատագա վէրէ-ճէք պիր մէրհամէթլի քիմէ բասթ կէլմէսի իչուն պիր ողջոյն սէօյլէրտի: Եօլտա քէնտի հալլէրինէ թէք օլունմըջ չօճուզլարըն օյ-նատըղընը կէօրտիւլիւնտէ, ծնլարըն հէր տիւրլիւ գազատան սալիմ օլմալարը իչուն տուա իտէրտի: Օնուն տուաը գապուլ օ-լունըրտը, պա խուսուս էօմրիւնիւն սօն աշ-լարընտա Յիսուս ծնուն հէր նիյազլարընը գապուլ էյլէմիշ տիր:

Իլք Հաղորդութիւնտան սօնրա, ծնուն կոչումը թէայիւն իտէր. հալլընըզ քահանայ օլաճաղը աէիլ, իլլա Սալէղեան քահանասը օլաճաղը թէգարրուր էյլէր: շէօյլէ քի, աշի-լէսինտէն աշրըլտըղընտա հիսս իտէճէյլ գահ-մէթտէն պահս իտէնլէրէ շու ճէվապը վէրիր:

— Իսթէտիյիմ գատար Յիսուսա մալիք օլաճաղըմ, զանն իտէրսէմ Յիսուսա մալիք օլանըն հիչ պիր շէյի նօզսան օլմազ:

Ազիզ Պիքիրէ տէ զայէթ իսլատէթքեար իտի վէ Քաւարան ճանլարընա ֆէվզէլատէ շէֆագաթը վար իտի: Պիր ճէնագէ ալայընա թէսատիւֆ իթտիյինտէ մութլագա ծնուն բուհը իչին տուա իթմէք նիլէթիյլէ պիր միւտտէթ ըէֆագաթ իտէրտի: Էօլիւմտէն գաթիլէն գօրգմագար: Տահա տէօրթ հաշրն-տա իքէն, «էօլիւմ» բուհըն քէնտի վաթա-նընա ալտէթի տիր» տէր իտի: Մա մաֆիյն սէվտիլ քիմէլէրին վէֆաթը ծնը միւթէէս-սիր գըլմագտան խալի գալմագար, պա խու-սուս Տօն Բուանրն էօլիւմիւ քէնտիսի իչիւն էն աղըր պիր թէճրիւպէ օլտու, ֆագաթ սապը իլէ չէքտի:

Էքսէրիա խասթէլիյի սէպէպիլլէ օտաւըն-

տան չըգմամայա մէճպուր դալըր իտի: Լա-քին «իլթէ պու սուրէթլէ Յիսուսա տահա հագըն պուլընտըղըմտան վէ կէօյլէրտէն պաշ-գա տիւշիւնէճէք պիր շէյիմ օլմատըղընտան նաշի զայէթ մէմնունըմ» տէր իտի: Աղըր հալտէ խասթէ օլտուղը վագըթ, հաղորդու-թիւն ալապիլմէք իչին նէվաթիւնի տուր-տուրտուղը սա չօգ տէֆա վագը օլմուշ տըր, շէօյլէ քի, հաղորդութիւնտան սօնրա խաս-թէլիք կինէ էսկի ըէվլիլինի թապիպ իտէրտի:

1911 սէնէսի Յունվարըն 18ինտէ Կիւս-թալ-Մարի Տար իւլ ֆիւնուս ըէյիսինին նէգ-տինէ կիտէրէք, օ անէ գատար քէնտիսինէ հարմըջ օլտըղը լութֆլարտան տօլայը պէյանը թէշէքքիւր իտիպ, արթըզ քէնտիսին վագ-թը իքմալ օլմագ իւզրէ պուլունտուղընը ծնա անլաթտը:

Յունվար 20տէ սաթլիճանա թուրուշ-րագ, հէման խոստովանանք օլուպ Հաղոր-դութիւն ալմագ իսթէտի վէ նէվաթիւն արա-սընտա «Սուլթանըմ, կիւզէլ սուլթանըմ, կէլ» տէտիլի իշիտիլտի:

Նէվաթիւն կէշտիքտէն սօնրա, քէնտիսինի ուզազ պիր եօճուլուղա կէօթիւրմէք իչին «պէյազլար կիլինմիշ կիւզէլ պիր սուլթան» կէլէճէյինի խապէր վէրտի:

Խասթէլիյի էսնասընտա ծնա իլք տէֆա զիյարէթէ կէլմիշ օլան Տօն Բինալաի ծնուն վալիտէսինէ «Կիւսթալ արթըզ պիլիմ տէ-յիլ տիր, օ՝ քրիսթիանա խասս օլան քէմա-լաթըն էն եիւքսէք մէրթէպէսինէ վասըլ օլ-տուղը իչին, արթըզ օ կէօյլէրին մալի տիր» տէմիշ տիր:

Հագիգաթէն տէ չօճուգտա հիչ պիր տիւն-հէվի արգու եօգտը:

Խասթէլիք զահմէթինի չէքտիլի կիճէ վէ կիւնտիւլլէրտէ, տայիմի սուրէթտէ Ալլահըն իրատէթինէ թէսլիմ օլարագ տուա իտէրտի: Խաշիւլութիւնընը պաղընա պասմըջ, հալը-նըզ Սահիպինի աիւշիւնիւր, ծնա սէօյլէր, ծնը արղու իտէր վէ բահաթլըղընը սիւալ իտէնլէրէ «Պէն Յիսուսըմը գապուլ իթտիմ» տէր իտի:

2օգ վագըթ մսաճալան իթմիշ օլտուղը պիր մատտէյի, հանի զահմէթ չէքմէք խու-

սուսընտա մուֆասսալ եազան պիր քիթապը
վէ Ս. Ալֆոնս Լիկուուրինին եօմրինիւ օգու-
տըպ ախլէրտի:

Ալթը կիւն, գօլլարը խաչ շէքլինտէ կէ-
րլմիշ վէ հարաքէթսիզ գալտը, ֆապաթ հիչ
պիր շիքեայէթ իթմէտի: Փետրվար 7տէ սօն
տէֆա Հաղորդութիւն ալտը: Նիհայէթ չօ-
ճուղա Թոշակ, Վերջին Օծում, վէ սօն Լիա-
կատար Ներդուլութիւն վէրիտի: Քէնտի ա-
տաժարընա էլվէտա իտէրէք ծնարա պազը
սիրարիչտէ պուլունտը վէ պիր իքի գըսա
տուա իթտիքտէն սօնրա, եւլքսէք սուրէթ-
տէ չաղըրաը: «Ալլան քէնտի մէլէքլէրի վէ
աղիզլէրի արասընտա միւպարէք օլտուն»:
Սօնրա խաչելութիւնընը էօբաիւ վէ Լուրա
Աստուածածինին կէօրիւնմէսի եօրթուպընը
պիր կիւն էվվէլի, Փետրվար 10տա րուհինի
թէպլիմ էյլէտի: «Պէյաղլար կիլինմիշ օլան
կիւղէլ Սուլթան» ծնը էպէտի մէսէրրէթէ
կէօթիւրմէք իւզրէ կէլմիշ իտի:

Էօլաիլիւնտէ եէտի սէնէ, տօղուզ ալ վէ
տէօրթ կիւնիք իտի:

Օնուն ճէնաղէսի ատէթա պիր մուղաֆ-
ֆարիյէթ շէքլինի ալմըշաը, ծնուն իֆթի-
րազընտան հասըլ օլան էլէմէ մուղապիլ պէօ-
յիւք պիր մէսէրրէթ հիսա օլունույօրտը:

Թիւրէն Սաղէղեան վարդապետալէրի, օ-
նուն թէնինին քէնտի մէսֆէնլէրինէ գօն-
մասընը արդու իթտիլէր: Արասը չօգ կէչ-
մէտի, ծնուն մէղարը պիր զիյարէթ կիւհա օլ-
տու վէ օ վաղըթտան պլէրի սլու միւպարէք
չօճուղըն շէֆաաթըյլա բէք չօգ լութֆլար
իհսան օլունտը:

ՏԸ ԼՕԲԲԻՆՕ ԳՕՆԹԷՍԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ի Ռ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Զ

Բաղմաթիւ ուխտաւորներ Հաւո՝ կ'երթան և Ս.
Քահանայապետին ունկնդրութեան և օրհնութեան
կ'արժանանան:

Հ. Լապէրթ ծնիւն, որուն բիսոսնէական ի-
մասսասիրութեան արեգիւղք գատապարտուած էր,
գովելի հպատակութեամբ համակերպեցաւ եկեղեցա-
կան իշխանութեան արամադրութեանց:

Ֆրանսայի մէջ Կաթողիկէայք կորովի կեր-
պով դէմ կը դնեն կառավարութեան այն արամա-
դրութեան որ կը ձգտի ազատ դպրոցները արգիլելու
ոչ բաղմամբաբ շրջանակներու մէջ: Այս առթիւ տը-
տասնութեան սրտընդոտ ճառերէն կ'ուզենք մեր
ընթերցողներուն ներկայացնել ժիպէրկ Եպիսկոպոսին
Վալանսի մէջ խօսածը, որ անկարագրելի խանդավա-
ռութիւն առթեց ամբողջ Ֆրանսայի:

Սիրելի Տեառք իմ,

... Կու դամ խղճի պարտք մը կատարելու, բար-
ձրարարաւ պարզելով իմ անձնական յայտարարու-
թիւնս Վալանսի սիրելի Կաթողիկէներու աչս պատ-
ուական բաղմութեան առջեւ:

Եպիսկոպոս ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ
Առաքելական Գահին, անդամ՝ Ֆրանս. մեծ եպիս-
կոպոսութեան զոր կը ծափահարէիք քիչ առաջ, և
որով իբր փառաւոր զգեստով մը կը ծածկեմ իմ ակա-
րութիւնս, յաջորդ՝ առաքելոց և պարտաւորուած ա-
նոնց պէս Քրիստոսէն և անոր տեսանելի ներկայա-
ցուցէն, Քահանայապետէն, հսկելու, հաւատարմ
և վարդապետութեան նուիրակուն աւանդին վրայ և ին-
ծի հաւատացուած ամենասիրելի հօտին և մանա-
ւանդ անպաշտպան սիրուն գաւառակներու հոգիները
զերծ պահելու ամէն մղորութենէ և վտանգէ, եթէ
հարկ ըլլայ մարմինս անոնց պատնէշ պիտի ընեմ. և
մինչեւ վերջին շունչս պիտի շնորհում որ այդ յափըշ-
տակիչ գաղիքը փարախը մանեն: (Բուն ծափեր)

Եւ եթէ երբեք կրօնքի և Աստուծոյ աղոց հոգ-
ւոյն վրայ ունեցած սրբազան իրաւանց հակառակ օ-
րէնքներ—եթէ երբեք ծնողաց պարտքերուն և անոնց
անբաժարարելի իրաւանց իրենց զաւակները քրիստո-
նէաբար գատարակելու և անոնց գրքով կամ խօսքով
արուած ուսման վրայ հսկելու հակառակ օրէնքներ—
եթէ երբեք, կ'ըսեմ, այդպիսի օրէնքներ քուէարկուին,
ինչ անուշով ալ զանոնք շարունակ, ինչ պիտակով ալ
անոնց խարդախութիւնը գիմակաւորեն, նուիրական
ուխտ կը դնեմ, յանուն Ֆրանսոյի գոր կը սիրեմ, և
որուն կենսական շահերուն վրայ է հոս խնդրը, յա-
նուն վրկուրեան հոգւոց գործք Աստուծոյ ինծի հա-
ւատացիք է, և որոնց համար, իր շնորհքով, պատ-
րաստ եմ իմ կեանքս տալու, — և ինչ որ ես հոս
կ'ըսեմ իմ բոլոր արհիպատիւ բնիկներս արամադրի-
են ինծի հետ կրկնելու — նուիրական ուխտ կը դնեմ
գործածել իշխանութեան և պաշտօնիս ինծի տուած
ամբողջ հեղինակութիւնը և Ս. Հոգւոյն գորութիւնը
որ զիս եպիսկոպոս ըրած է, ներշնչելու իմ բոլոր կա-
թողիկէներու զայրոյթ և արատաւորութիւն: (Կեց-
ցենք, ծափեր)

Նուիրական ուխտ կը դնեմ զամէնքը հրաւիրելու
որ միանան, կազմեն սուրբ և վսեմ խաչակրութիւն
մը և իրենց բովանդակ ուժերով կառնին այդօրինակ
օրէնքներու դէմ, և անոնց հակառակ գործեն համար-
ձակօրէն, յանդգնօրէն: (Կեցցենք, ծափեր)

Թող մեզի դէմ դառ բանան, թող զմեզ տանին
ստիկանական պաշտօններու և ատենակալներու
առջեւ, թող յափշտակեն մեզմէ մեր ինչքերը, թող
բանտարկեն, թող զմեզ անարգեն, թող մեր անուշը
աղարտեն, զմեզ թշնամանեն, անիծեն... ամէն բան
պիտի կրենք ժպտադէմ և ազօթելով մեր խեղճ հա-
լածողաց համար, ամէն բան պիտի կրենք, կ'ըսեմ,
Անոր սիրոյն համար որ ապանուեցաւ և խառնեցաւ
մարդոց սիրոյն համար... Բայց պիտի չհանգուրժենք
ցորքան մեր երակներուն մէջ կաթիլ մը արիւն կայ,
ցորքան մեր սիրտը կը բարսիսէ, պիտի չհանգուրժենք
որ մեզմէ յափշտակեն Աստուծոյ մեր խնամքին յանձ-
նած հոգիները, մանկութեան հոգիները, ո՛չ, այս
բանի պիտի չհանգուրժենք երբէ՛ք, երբէ՛ք (Ան-
կիարագրելի խանգալաւ ցոյցեր)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Գերջ. Կղեմէս Ծ. Վ. Ճիմճիմեան ինչ ինչ գոր-
ծոց կարգադրութեան համար Անկիւրիայէն Պոլիս ե-
կած է:

✱ Անարատ Բզուժեան կարգին մայր վարժա-
րաններու ամառիկի քննութիւնները կատարուեցան
շատ գոհացողիչ կերպով: Ներկաներուն կողմէ յատ-
կապէս գնահատուեցան երկու շրջանաւարտները, Օ-
րիորդ Սահղուհի Բ. Ըբերտեան և Օրիորդ Եղիաբեթ
Ղ. Դարբինեան, որ հայերէն և ֆրանսերէն լեզուով
մեծ դիւրութեամբ կը պատասխանէին իրենց ուղ-
ղւած հարցումներուն: Ն. Ամենապատիւ Գերբշ. Ե-
կեղեցիի Ներկայ գտնուեցաւ նոյն վանատան ըն-
ծալարանի քննութեանց և ուսանողուհեաց յառաջ-
գիմնութիւնը մօտէն տեսնելով քաջաբերական խօսքեր
ուղղեց անոնց. և իր գոհունակութիւնը յայտնեց
նոյն հաստատութեան վարիչ և ուսուցիչ անխնայ
քաջերուն և ամբողջ նոյն Կարգին որ այնքան մեծ
գոհողութիւններով նուիրուած է թէ՛ Աւագ Թեմի և
թէ՛ դաւառներու մէջ օրիորդաց բարոյական և ու-
սումական կրթութեան ամենակարեւոր գործին:

✱ Յուլիս 10ին, 11. Բզուժեան Գերջ Մայր
վանատան մէջ տեղի ունեցաւ ընդհանուր մեծաւո-
րուհիի ընտրութեան առթիւ տրուած քուէներուն
բացումը, ի ներկայութեան Ամենապատիւ Հոգեւոր
Տիրոջ, Արհի. Փոխանորդ Գերապայծառին և Գերջ.
Թումանեան Ծ. Վարդապետին նոյն Կարգին Գործա-
կալին: Ընդհ. մեծաւորուհի ընտրուեցաւ Մեծարոյ և
Առաքինաւարդ Քոյր Պրիծիտա Եաղլըքճեան:

Այս խոստովանիչ ընտրութեան առթիւ կը յայտ-
նենք մեր սրտագին շնորհաւորութիւնները Ա. Բզու-
ժեան Կարգին, և կը մաղթենք Նորընտիր բազմադիւն
Մեծաւոր Մօր ուժ և կար՝ յաջողութեամբ պսակե-
լու իր վրայ գրուած յոյսերը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Նախարարաց Խորհուրդը Բ. Դրան մէջ նիստ գու-
մարելով զբաղեցաւ մասնաւորապէս Պալքանեան ներ-
կայ պատերազմին մէջ օսմ. կառավարութեան հե-
տեւելիք զինուորական և քաղաքական ուղղութեան
ճշդման խնդրով:

Մեծ տէրութեանց դահլիճներուն մօտ գտնուող
օսմ. դեսպաններէն և մասնաւորապէս Պուքէշի օսմ.
դեսպանատան կողմէ հաղորդուած ընդարձակ տեղե-
կագիր հեռագիրներ կարդացուեցան:

Օսմ. դեսպանները տէրութեանց դահլիճներուն
մօտ դիմումներ կատարած և ուղած էին հասկնալ
թէ, այս միջոցիս օսմ. կառավարութեան հանդէպ
ինչ արամադրութիւններ կը տիրեն և թէ օսմ. կա-
ռավարութեան կողմէ կատարուելիք զինուորական
գործողութեան մը հանդէպ տէրութիւնք ինչ ըն-
ծալք պիտի բռնեն:

Նախարարաց Խորհուրդը երկար վիճարանութեան
ենթարկեց այս կենսական խնդիրները: Խորհուրդը
ուսմանական դեսպանին յայտարարութեանը մասին
վարչապետին լուսաբանութիւններուն վերահսկող
լայէ ետք խորհրդակցութիւններ կատարեց նոյնպէս
Սերպիոյ, Յունաստանի կողմէ եղած առաջարկներուն
վրայ:

✱ Բ. Դուռը Պուլկարիոյ ծանուցագիր մը տա-
լով յայտարարած է թէ չորս օր պայմանաժամ կու-
տայ իրեն՝ Չաթալճայէն և Պուլպիթէն մինչեւ Էնոս-
Միտիա գիծին վրայ գտնուող իր զօրքը ետ քաշելու
համար: Նեղոլոս կ'իմանայ թէ Բ. Դուռը պահան-
ջած է պարպել նաև Էնոս քաղաքը և հոն գտնուող
պուլկար զօրքը Էվրոս քաշել:

✱ Բարկի Ելմտական յանձնաժողովին պատ-
ուիրակները իրենց վերջին նիստը գումարեցին ելմտա-
կան նախարարութեան մէջ: Օսմ. պատուիրակները
Բարկէն պիտի մեկնին առաջիկայ շարժու: Ժողովին
խնդրոյ առարկայ եղած է բանակցութեանց վերակը-
սելուն թուականը որոշել:

✱ Բ. Դուռը հրատարակեց նոր կանոնագիր մը
արեւելեան գաւառներու բարենորոգման մասին:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Քիչ առաջ իրարու գինակից Պուլկարիոյ և միւս
երեք Պալքանեան տէրութեանց միջեւ արեւնալի կը-
ռիւնի տեղի կ'ունենան անընդհատ:

Իրումէն կառավարութիւնը դեռ հրապարակաւ
չյայտնեց թէ Պալքանեան պատերազմին մէջ իր միջա-
մութիւնը ինչ եղանակաւ պիտի բլլայ: Ընդհանուր
զօրահանութիւնը որուն շարաւթ մը առաջ սկսաւ,
արդէն իսկ ամբողջացաւ: Կ'ըսուի թէ իր զօրաց թի-
ւը կը հասնի 350,000ի:

✱ Եւրոպական մայրաքաղաքներէն ստացուած
տեղեկութիւններ կ'ըսեն թէ տէրութիւններու միջեւ

կարծիքի փոխանակութիւններ տեղի կ'ունենան Պալ-
քանեան նոր վտանգին հանդէպ իրենց զիրքը վերջ-
նականապէս ճշդելու համար: Մինչեւ հիմա տակա-
ւին ու է որոշում չէ տրուած: Տէրութիւնները,
մասնաւորապէս Երրեակ Համաձայնութեան պատկա-
նողները, առ այժմ չէզոքութեան կուսակից ըլլալ կը
թուին և Երրեակ Զինակցութեան տէրութիւններուն
մօտ ևս դիմումներ կը կատարեն անոնց չէզոքու-
թիւնը ևս ապահովելու համար: Ուրեմն սկզբունքով
չէզոքութիւնը կ'ընդունուի, սակայն թէ այդ չէզո-
քութիւնը ինչ հանգամանք պիտի ունենայ, այդ մա-
սին դեռ ու է լուր չկայ:

*. Բարիզ 8. — Վիեննայի թերթերուն կը հեռա-
գրեն. Սերպեպուրիար յայժմ անակներու մասին զըր-
ուածներէն կարելի չէ ճշմարտութիւնը հանել: Բայց
ինչ որ նշանակելի է, սա է թէ պաշտօնական օսկան
Սամուրբալլա կոչ կ'ընէ սերպեպուրիար համաձայ-
նութեան մը, զոր կը դնեն յաւազոյն միջոցը Պալ-
քանեան մէջ ներդաշնակութիւն հաստատելու:

*. Սոփիա, 7. — Այս տեղ առնուած տեղե-
կութիւններու նայելով Սերպ կրդ. Ծրդ և Վրդ վաշ-
տերը բոլորովին հարգուեցան Պալկար բանակին կողմէ:
Միւս կողմէ զօրավար Խվանօֆի հրամանատա-
րութեան տակ դանուող կիսաբաժին մը ցրուեց 80.000
հոգիէ բաղկացած բանակ մը, որուն կը հրամայէր
Կոստանդինուս թագաւորը: Ֆէրաինանա թագաւորը
այս լուրը լսելուն՝ ուրախութենէն յացաւ:

*. Անգլիոյ մէջ քուէտպահանջ կիները կը շա-
րունակեն իրենց շահատակութիւնները: Անոնց պա-
րագլուխները Լոնտոնի կեդրոնական եղեռնագրաս առ-
եանին առջեւ մի քանի անգամ հարցաքննուելով դա-
տապարուած են բռնադատուելու տարի ու կէս,
տարի մը կամ աւելի նուազ իրենց յանցանքներուն
համեմատ: Այդ քուէտպահանջները հազած են բան-
տարկելոց համադրեալը, անոնց պէս կ'աշխատին և

տոխտակի վրայ կը պառկին: Կ'ըսուի թէ տանցմէ ո-
մանք մերժելով ամէն տեսակ անուղ կ'ուղեն սովա-
մահ ըլլալ: Այս բանս մեծ մտահոգութեան պատ-
ճառ եղած է:

*. Բարիզ 8 Յուլիս (Օսմ. Գործ.). — Թերթերու
հրատարակած տեղեկութիւններէն կ'երևայ որ Եր-
րեակ Զինակցութիւնը կ'ուզէ դիւանագիտական տե-
սակէտով դործելու որոշ ազատութիւն մը պահել
ինքիքին:

*. Բարիզ 7 Յուլիս. — Խորհրդարանը երեք տար-
ուան զինուորական ծառայութեան օրինագիծին 18րդ
յօդուածին առաջին մասը ընդունեց, ըսելով. «Ամէն
Ֆրանսացի որ զինուորութեան յարմար է, դործօն բա-
նակին կը մասնակցի երեք տարի»:

*. Գահիրէն կը հեռագրուի թէ առնուած տե-
ղեկութեան մը համաձայն, Տրիպոլիսի մէջ Իտալա-
ցիներուն և Արաբներուն միջեւ նորէն կռիւ մը պա-
տահած է և այս ընդհարումին մէջ Իտալացիները
500 մեռաւ և վիրաւոր ձգելով փախուստ տուած են:
Իտալական բանակին օգնական զօրք գացեր է, բայց
Արաբները կրկին մեծ ուժով յարձակեր և Իտալացի-
ներուն մեծ ֆոսս տալով զանոնք ետ մղեր են:

*. Թասվիլի Էմբեսար կ'իմանայ որ մեծ տէրու
թիւնները բոլորն ալ որոշած են մէկ մէկ մարտնաւ
դրկել Սելանիկ: Ատով տէրութիւնները կ'ուզեն Բու-
մէլիի իրենց հպատակներու իրաւունքները պահպանել:

*. Կ'ըսուի թէ Յունաց Կոստանդին թագաւորը
իր օտուար բանակին հետ պաշարուած է Պալկարնե-
րէն:

*. Հռոմէն կը հեռագրեն որ Իտալական կառա-
վարութիւնը հողորդեց ֆրանսական կառավարու-
թեան թէ կատարելապէս համաձայն է Պալքանեան
պատերազմին տէրութեանց կողմէ և և եւ է միջա-
մատութիւն չկատարելու մասին անգլիաֆրանսական ա-
ռաջարկներուն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	433
Եր. Տէր Կոմիսսա Նահասակին պատմական երկու գրութիւններ	435
Յիսուս Քրիստոս	438
Իմաստութեան սկզբանց վրայ յարոյսական եւ պատմական խորհրդածութիւններ	440
Եօթնեակ Քրիստոնէի	443
Սուրբ Սիրս Յիսուսի	444
Ս. Հաղորդութիւնքն քիչիւք սերովքսի	445
Տեղեկագրական	446


ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ե. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ



ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, արեւկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Սրտասահման՝ ար. ճր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կարողիկէ Արձազանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձազանգ կը նրաստակուի Շարաք օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն յղուած ո եւ է յղուած: 3.—Կեդանունով յղուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Չեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Զօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բուրժիւ մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրում ի միասին յղել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձազանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի ճշիւ եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը ստուիս ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-տետրեր, մայրաղներ, եւն., եւն.: Դիւերը ամբողջելի կերպով տպան են: Դեղեցկագիտական ճաշակի եւ տպագրական մաքրութեան կողմանէ յանախորդները առատակոյս զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻ ԵՍՏՐԱԿԱՆ Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիւստոքիւնը հրամայեալ Բաղկացում է 136 էջերէ: Դիւ, ամուր թղթակազմը 2 դնկն.:
